ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«29» 05 2024 թ.

№ ՄԿՆՊ-ԳՆ/-799

«ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 03566648)
տնօրեն Ա. Խոջայանին
հասցե՝ ՀՀ, Կոտայք Բյուրեղավան 55 27 70
էլ. հասցե՝ av.com@list.ru
հեռ. 094 50 14 04

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ի միջև 25.12.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-3/1-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը Պայմանագրի 8.13 կետով սահմանված՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել և ՀՀ պաշտպանության նախարարություն չի ներկայացրել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մայիսի 29-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **1 194 375** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **1 791 562.50** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 07.06.2024թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 07.06.2024թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ